№ 234 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 1899 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 № 234

ՔԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաշխագրութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաշխագրութիւնների համար վճարում են
ուրբաթանշիւք բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1900** ԹՎԱԿԱՆԻ

# ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊԻՏԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կարտուղարներ ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիայի ստեղծած դրութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Վրաց ընկերութիւնները. Նամակ Նուլավէրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Ֆրանսվալեան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կարօտեալների մէջ։

### ԱՆԳԼԻԱՑԻ ՍՏԵՂԾԱԾ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Հարաւային Աֆրիկայում Անգլիայի կրած խոշոր պարտութիւնները անսովոր վրդովմունք են առաջ բերել Մեծ Բրիտանիայի մէջ և խիստ տպաւորութիւն են գործել Եւրոպայի ցամաքի վրա, որտեղ հասարակական կարծիքը տասնեակ տարիների ընթացքում սովոր էր Անգլիային տեսնել յաղթողի և ազգերի վիճակը կարգադրողի դերում։ Բազմաթիւ յօդուածների մէջ քննութեան են ենթարկվում Անգլիայի ոյժը և նրա համաշխարհային գործունէութիւնը, աշխատելով գուշակել այդ խոշոր և լայնածաւալ պատերազմի ապագան։ Հարաւային Աֆրիկայի անաջողութիւնները ցոյց են տալիս, որ առաջնակարգ պետութիւնը կարող է զգալի խայթոցներ ստանալ այնպիսի տեղերում, որոնց նա առանձին նշանակութիւն չէր տալիս, և այդպիսով վնասել իր ընդհանուր հեղինակութեանը։ Անկասկած, այդ անաջողութիւնները անկարող են խախտել Անգլիայի առաջնակարգ դերը եւրոպական կոնցերտում, բայց նրանք կը ծնեն մի շարք նոր բազմոյն դժուարութիւններ և անախորժութիւններ այդ պետութեան համար, որ տասնեակ տարիների ընթացքում պատրաստել է շատ թշնամիներ իր դէմ։

Քաղաքական աշխարհում խօսելիս, որ իբր թէ Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնները լարվել են այնքան, որ կարող է պատերազմ ծագել նրանց մէջ։ Ֆրանսիական պատերազմասէրների մի մասը նոյն իսկ համարեց ներկայ րոպէն շատ յարմար և նպաստաւոր Ֆրանսիացիների համար։ Սակայն աւելի լուրջ պետական անձինք աշխատեցին խսկոյն հերքել Ֆրանսիայի կողմից որ և է այդ տեսակ դիտաւորութիւն։ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դելկասէ, մի խօսակցութեան մէջ, որ հրատարակվեց լրագիրներում, յայտնեց, որ Ֆրանսիան երբէք չէ մտածել պատերազմի մասին Անգլիայի հետ և նա կաշխատէ թոյլ չը տալ, որ մի այդպիսի պատերազմ ծագի։ Եռոպային պատերազմը ներկայումս կարող է նպաստաւոր լինել միայն Անգլիայի համար, որը շահունի ոչնչացնել Ֆրանսիական նաւատորմը, իսկ եթէ Անգլիան ինքը կը ցանկայ մի այդ տեսակ պատերազմ առաջ մղել, այն ժամանակ նա պէտք է հաշուի առնի, որ Ֆրանսիան ունի մի այնպիսի ուժեղ դինակից, որպիսին է Ռուսաստանը, որի հետ Ֆրանսիայի յարաբերութիւնները ոչ միայն չեն թուլացել, այլ դարձել են աւելի ևս սրտագին։

Պետերբուրգում հրատարակվող «St. Petersburg. Herold» կիսապաշտօնական լրագիրը հերքում է այն լուրերը, որոնք Ռուսաստանին վերագրում են նուաճողական նպատակներ ներկայ րոպէներում։ Եթէ Ռուսաստանը, ասում է լրագիրը, ցանկանար գործել Աւղանիստանում և Պարսկաստանում, առաջ տանելով Պամիրի սահմանադիծը, Անգլիան անզօր կը լինէր նրա դէմ. բայց Ռուսաստանը դիտաւորութիւն չունի օգուտ քաղել ներկայ հանգամանքից։ Ռուսաստանը զարգացնում է իր քաղաքականութիւնը դանդաղաքայլ և ստուգանաբար։ Նա ճանաչում է իր ոյժը և երբ նրա կենսական շահերը կը թելադրեն, նա կը պահանջէ, որ նրանց յարգեն. նա անկեղծ կերպով ցանկանում է խաղաղութիւն և Ռուսաստանը լուրջ քայլ կանի միայն այն ժամանակ, երբ կը համոզվի, որ Անգլիան մտադիր չէ ձեռք վերցնել իր անտահման ասիական քաղաքականութիւնից։

Պէտք է յոյս ունենալ, որ գոնէ այժմ, երբ հորիզոնի վրա կիտվում են բարդութիւններ, պետութիւնները կաշխատեն փոխադարձաբար յարգել միջազգային շահերը և թոյլ չեն տայ, որ խաղաղութիւնը խանգարվի, ստեղծելով նոր պատերազմական դաշտեր։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

«Жизнь» ամսագրի վերջին համարում կայ մի փոքրիկ յօդուած «Ժողովրդական թատրոնը Բրիւսսելի մէջ (Ֆրանսիայում, Վօգեզեան սարերում)» վերնագրով։ Պարիզի հակասեմիտական, կղերական և այլ այսպիսի անճոռնի աղմուկներից ձանձրացած մէկը գնում է լեռնային այդ երկիրը՝ ժողովրդական թատրոնը տեսնելու համար։ Բրիւսսելի մի փոքրիկ տեղ է։ Տեղական հարուստ գործարանատիրոջ որդին, պ. Մորիս Պոտիշէր, կառուցել է մի անագին փայտաշէն թատրոն և ինքը իր կնոջ հետ դերասանութիւն է անում ժողովրդի համար։

Պատերի վրա, բեմի երկու կողմերին, մեծ տառերով, որոնք կազմված են ադիւններից, գրված է՝ ձախ կողմից «գեղեցկութեան միջոցով», իսկ աջ կողմից՝ «արդարութեան համար»։ Սրամշտական խումբը, կազմված հարևան ապակեայ գործարանի բանուորներից, նուագում է մարդագեմում, որ հասարակութեան համար ֆօէի դեր է կատարում։ Ժամի ժամանակ մէկին վախուն հաճար և մէկին ուխտուն կոթեկ է տալիս, չորանում է ու տոչորվում։

Բացի հաճարից ու կոթեկից գիւղացիները վարում են սիսեռ, վարսակ, արևածաղիկ և գետնախնձոր, որոնք ոչ-երաշտ տարիներին նոյնպէս առատ հունձ են տալիս, ինչպէս ներկայ տարին։ Ցուէք այս արդաւանդ երկրին արուեստական ոռոգումն, նա կը ծաղկի, դրախտ կը դառնայ։—Հունձը այս կողմերում ուշ է սկսվում. յուլիսի 10-ից սկսում են հաճարի հունձը, իսկ օգոստոսի մէջից՝ կոթեկինը։ Դաշտը աշխատանքի է դուրս գալիս համարեա ամբողջ գիւղը՝ տղամարդ, կին, տաս տարեկան երեխաներից սկսած մինչև 60—70 տարեկան ծերունիները, նոյն իսկ կոյրերը և յղի կանայք ժամանակցում են դաշտային աշխատանքներին։ Քիչ չէ պատահում յղի կանանց աշխատելիս ծնել։ Հիւանդների միջին կար մի կոյր տղամարդ, որը ձեռքի վրա վերք էր ստացել հնձելիս։ Արտերում տղամարդիկ և աղջիկները գլխաբաց են աշխատում, այնպէս որ արեգակի կիզող ճառագայթների տակ յաճախակի հիւանդանում են։ Գլուխը ծածկում են միայն ամուսնացած կանայք։

Միւս կողմից անդադար կրկնվող հրդեհները քիչ վնաս չեն պատճառում ռուս գիւղացու տնտեսութեան։ Գիւղական խրճիթը, նոյնպէս և միւս շինութիւնները, փայտից են շինած, իսկ տանիքը յարդով ծածկած։ Գլխաւոր սենեակի մի անկիւնում կանգնած է լինում ռուսական աղիւսեայ վառարանը, ուր կերակուր են եփում և հաց թխում։ Այդ անկիւնում դրած են զանազան սրբերի պատկերներ, որոնց առջև կախված է լինում մշտավառ ձիթաճրագը։ Պատերի տակ շարած են նստարաններ, իսկ մէջտեղը՝ մի սեղան։ Նեղ նախասենեակը բաժանում է գլխաւոր սենեակը միւս աւելի փոքրիկից, որը իբրև ձեռքատեղի է ծառայում։ Թրմիլ ուրիշին ուղիղ այնքան վարձատրով, որքան հարկաւոր է մանկացած գիւղացու բաժին պետական հարկը վճարելու։ Ուրեմն այդպիսի գիւղացին այլ ևս իր սեփական տնտեսութիւն չէ ունենում և նա վարձկան մշակ (բատրակ) է դառնում աւելի ունևոր գիւղացու մօտ։ Մատիւշկինօ գիւղի հաճայնքի մի երրորդ մասը այդ ձևով կերպարանափոխված մշակներ են, մնանկացած երկրագործներ։—Ի՞նչն է պատճառը այս տխուր երևոյթի, ինչու ժողովուրդը ենթարկվում է կարօտութեան և աղքատութեան, ակամայից մտածում է մարդ։—Մարդիկ, այդ երևոյթին բացատրութիւն տալու համար, սովորաբար առաջ են բերում կամ բնութեան արհաւիրքներ, կամ ժողովրդի տգիտութիւն, կամ սակաւահողութիւն։—Մի որ և է առանձին երևոյթով պատճառաբանել գիւղացու տնտեսական դրութիւնը, մեր կարծիքով, միակողմանի կը լինէր։ Այդ խնդիրը այնքան բարդ է, այնքան փափուկ է, որ պէտք է նրան զանազան կողմերից մօտենալ։

Մի երկիր, ինչպիսին է Սամարայի նահանգը, որ իրաւամբ ժառանգել է «Ռուսաստանի շտեմարան» անունը, այս վերջին տարիները ոչ թէ ուրիշներին է կերակրում, այլ միջոց չունի ինքն իրան կշտացնելու։ Նրա հողը այժմ էլ արդաւանդ է, ինչպէս և առաջները։ Ահա ինչ է ասում յայտնի բնագէտ և ճանապարհորդ Պալլաս, մօտ 130 տարի սրանից առաջ ճանապարհորդելով այս կողմերում. «...Օտարերկրեայ մարդը զարմանքով է նայում այս տեղերի հողագործական ձևերի վրա։ Տեղիս գիւղացիները չը հերկած հողի երեսին, մի հողի, որ առանց պարարտան էլ արդաւանդ է, ցանում են հաճար, կորեկ, վարսակ այնպէս, կարծես թաչունների համար կուտ շաղտալիս լինէին. ցանելուց յետոյ սկսում են արօրով վարել. արօրի ետևից մի ձի ցաքանն է քաշ տալիս։ Ահա ամբողջ աշխատանքը սրանում է կայանում»։

Այդ արդաւանդ հողը անբերրի է դառնում, երբ ամուսայ երաշտը չորացնում է նրան։ Զը նայած որ Զէրդակլուի դաւառակը ընկած է երկու գետի միջև,—արևմտեան կողմից հոսում է Ջրառատ Վոլգան, իսկ արևմուտքից և հարաւից՝ Զէրէմշան գետը,—երկիրը ջրի սաստիկ պակասութիւն է զգում։ Նա իր աչքի առաջ Ցանտալի նման տեսնում է ջուր, բայց օգտվել նրանից չէ կարողանում։ Զը կայ այստեղ ոչ մի առու այդ գետերից, չը կայ արհեստական ոռոգում։ Խմելու ջուրը գիւղացիները ջրհորներից են ստանում, իսկ տաւարի համար փոսերի մէջ հաւաքում են անձրևաջուրը։ Արտերը և բանջարանոցները չեն ջրվում։ Այս կողմերում այգիներ չը կան, իսկ անտառների մեծ մասը անհետացել է, մնացածը կամաց-կամաց չքանալու վրա է։ Գիւղացին, կարծես, մի տեսակ թշնամական զգացում է տածում դէպի ծառը. նրա կացինը անխնայ կերպով կտրում է ամեն մի ծառ, որի վրա իրաւունք ունի, և երբէք նորը, կտրածի փոխարէն, չէ տնկում։ Անցնում ես գիւղեր, ոչ մէկում մի կանաչ ծառ չը կայ, որ երկրի միակերպութիւնից յոգնած ճանապարհորդի աչքը կարողանար հանգստանալ։ Առաջները, ինչպէս ծեր մարդիկ են պատմում, անտառներ շատ կային։ Բոլոր ձորակների մէջ, ուր ներկայումս գարնանային յորդ հեղեղները միայն աւազ են բերում, աճում էին վիթխարի սոճիներ, հաճարկիներ, կաղնիներ։ Ծառերի տակ խոխոջում էին գետակներ ու աղբիւրներ, որոնք ոռոգում էին երկիրը և երաշտի ժամանակ ապաստան նրան իսպառ չորանալուց։ Անտառների ոչնչանալուց յետոյ, չորանում են աղբիւրները և գետակները։ Այժմ գիւղացին յոյսը դնում է միայն անձրևների վրա՝ իր արտերը ջրելու համար։ Նրա բախտը կապված է օդերևոյթական պատահարներից. չը կայ անձրև՝ սովը նրա հաւատարիմ հիւրն է։ Զրի պակասութիւնից նրա սև ու պարարտ հողը, որ սովորական ժամանակ մէկին վախուն հաճար և մէկին ուխտուն կոթեկ է տալիս, չորանում է ու տոչորվում։

Բացի հաճարից ու կոթեկից գիւղացիները վարում են սիսեռ, վարսակ, արևածաղիկ և գետնախնձոր, որոնք ոչ-երաշտ տարիներին նոյնպէս առատ հունձ են տալիս, ինչպէս ներկայ տարին։ Ցուէք այս արդաւանդ երկրին արուեստական ոռոգումն, նա կը ծաղկի, դրախտ կը դառնայ։—Հունձը այս կողմերում ուշ է սկսվում. յուլիսի 10-ից սկսում են հաճարի հունձը, իսկ օգոստոսի մէջից՝ կոթեկինը։ Դաշտը աշխատանքի է դուրս գալիս համարեա ամբողջ գիւղը՝ տղամարդ, կին, տաս տարեկան երեխաներից սկսած մինչև 60—70 տարեկան ծերունիները, նոյն իսկ կոյրերը և յղի կանայք ժամանակցում են դաշտային աշխատանքներին։ Քիչ չէ պատահում յղի կանանց աշխատելիս ծնել։ Հիւանդների միջին կար մի կոյր տղամարդ, որը ձեռքի վրա վերք էր ստացել հնձելիս։ Արտերում տղամարդիկ և աղջիկները գլխաբաց են աշխատում, այնպէս որ արեգակի կիզող ճառագայթների տակ յաճախակի հիւանդանում են։ Գլուխը ծածկում են միայն ամուսնացած կանայք։

Միւս կողմից անդադար կրկնվող հրդեհները քիչ վնաս չեն պատճառում ռուս գիւղացու տնտեսութեան։ Գիւղական խրճիթը, նոյնպէս և միւս շինութիւնները, փայտից են շինած, իսկ տանիքը յարդով ծածկած։ Գլխաւոր սենեակի մի անկիւնում կանգնած է լինում ռուսական աղիւսեայ վառարանը, ուր կերակուր են եփում և հաց թխում։ Այդ անկիւնում դրած են զանազան սրբերի պատկերներ, որոնց առջև կախված է լինում մշտավառ ձիթաճրագը։ Պատերի տակ շարած են նստարաններ, իսկ մէջտեղը՝ մի սեղան։ Նեղ նախասենեակը բաժանում է գլխաւոր սենեակը միւս աւելի փոքրիկից, որը իբրև ձեռքատեղի է ծառայում։ Թրմի-

երեքն է կէսօրից յետոյ. նոր եկաւ երկաթուղու գնացքը Էպինալից և Բէմիրեժոնից։ Զը նայած ծանր մթնոլորտին, որ փոթորիկ է դուշակում, չը նայած սև ամպերին, բոլոր ճանապարհները, որոնք տանում են դէպի ժողովրդական Թատրոնը, գոյնզգոյն ժապաւէնների են նման, այնքան շատ էին եկող մարդիկ։ Այդ ամբողջ ամբոխը հեղեղի նման ներս է թափվում թատրոնի բաց մուտքերով, բաժան բաժան է դառնում, նստում է նստարանների վրա դանդիռում, որ երեք հազար մարդ կարող է տեղաւորել։ Զը նայած հասարակութեան այս մեծ թիւին, տիրում է լռութիւն, որ ժամասացութեան միջոցին եկեղեցում եղած լռութիւնից էլ մեծ է։

Ամենից հետաքրքրականը այն է թէ ինչ տեսակ կերակուր են տալիս այդ բազմութեան։ Արդէն բեմի երկու կողմին դուրս բերած արձանագրութիւնները ցոյց են տալիս թէ ինչ ուղղութեամբ են գործում Թատրոնի ղեկավարները։ Գիհանները վերցրած են ժողովրդական կանանցից, կենդանացնում են լեգենդները։ Եթէ յիշում էք, կայ մի սիրուն լեգենդա, որ պատմում է թէ ինչպէս մի հզօր իշխանապն, որին տանջում են կասկածները, որ կորցրել է հաւատը դէպի կեանքը, որոնում է բախտաւոր մարդու շապիկը, որպէս զի հագնէ նրան և առողջանայ։ Ցիշում էք նոյնպէս, որ երկար թափառումներից յետոյ գտնում են այդպիսի մի մարդ, բայց դուրս է գալիս, որ այդ բախտաւորը շապիկ էլ չունի։

Ֆանտաստիական իշխանապնը, որ վազվզում է աշխարհում՝ որոնելով անհասանելի երջանկութիւնը, վերջապէս կանգ է առնում այստեղ, գիւղական քնութեան մէջ, որ հիանալի կերպով հասկացված է և ներկայացրված։ Չէ կարելի խօսքերով արտայայտել այս երեք գործողութիւնների ամբողջ դիւթիչ տպաւորութիւնը։

Դերակատարներն են Թատրոնի կառուցողը, նրա կինը, եղբայրը։ Բայց կայ և այն գեղեցիկ հանգամանքը, որ երկրորդական դերերը կատարում են տեղական գիւղացիները, բանւորները, աղջատ թէ կին։ Սրանք մրցանում են պիեսի մէջ տեղական կեանքի թարմ հոգին, լեզուն և արտասանութիւնը, ժողովրդական բնաւորութիւնը, առանց Թատրոնական արուեստականութեան, բայց պարզ, ճիշդ, հիւթալից բէալականութեամբ։ Ահա դարձ, ահա դաստիարակութեան տեղ։ Ժողովրդի ամբոխը այդտեղ այն մակոյտը չէ, որին հին ժամանակներում տրկացնում էին իշխանութիւն ունեցողները, որին Նապոլէոն I անուանում էր «ինդանոթի միս», այլ դաստիարակվող, հասկացող մի բազմութիւն, որ ամբողջովին կենդանաբար, ստեղծագործող ոյժ է, ստեղծագործող՝ այս բառի լայն նշանակութեամբ։ Նկարագրութեան հեղինակը ներկայացումից յետոյ գնում է այդպիսի գեղեցիկ հիմնարկութիւն ստեղծող Մօրիս Գոտիշէրի մօտ, որպէս զի յայտնէ նրան իր գոհունակն ու հիացմունքը։

«Վերադառնանք դէպի ժողովուրդը—ասաց ինձ այս երիտասարդ, քաջ բէֆօրմատօրը—վերադառնանք դէպի ժողովուրդը, բայց չը կարծելով մի և նոյն ժամանակ թէ մենք բարերարութիւն ենք անում նրան։ Տրաժարվենք ամեն մի հպարտ մտքից, մեզ այնքան չոյող այն կարծիքից, թէ մեղք ենք գալիս ժողովրդին։ Մենք ենք ժողովրդի պարտականը և ոչ թէ նա մեր պարտականը։ Նոր միութիւն, որի մասին ես մտածում եմ, որքան մեզ կը բարձրացնէ, այնքան էլ կը հարստացնէ. ժողովուրդը իր սեփական արիւնը կը թափէ մեր երակների մէջ։ Ժողովուրդը գեղարուեստի համար նոյնն է, ինչ առասպելական Անտէի համար էր հողը, որից նա ոյժ էր ստանում։ Երբ գեղարուեստը դառնում է ուժաթափ, անարիւն և, որոնելով կեանք և լոյս, քարշ է տալիս իր գոյութիւնը, նրա համար ուրիշ ելք չը կայ, բայց միայն խնդրել բնութիւնից և ժողովրդից, որ նրանք վերակենդանացնեն, երիտասարդութիւն տան և գեղեցկութիւնը արտայայտելու կարողութիւն»։

## ՎԱՌՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վրացիների մէջ հասարակական շատ քիչ ընկերութիւններ կան, եղածներիցն էլ միմիայն երկուսն են ծառայում ժողովրդի մտաւոր զարգացմանը. դրանք են՝ «Գրագիտութիւն տարածող» և «Հրատարակչական» ընկերութիւնները, իսկ երրորդը՝ «Շուամավալի» (միջնորդ) ընկերութիւնն է, որն առևտրական բնաւորութիւն ունի։ Դրանցից ամենահինը և ամենանշանաւորն է «Գրագիտութիւն տարածող ընկերութիւնը», որը 20 տարի գոյութիւն ունի և բաւական օգուտ էլ տուել է վրաց հասարակութեան, ուստի ուրախ չենք հաստատում ծանօթացնել հայ ընթերցողներին նրա գործունէութեան հետ։

Ընկերութիւնը հիմնվել է 1879 թւին, վրաց մի խումբ գործիչների նախաձեռնութեամբ։ Ինչպէս ընկերութեան անունն էլ ցոյց է տալիս, նրա նպատակն է՝ վրացիների մէջ գրագիտութիւն տարածել, թէ մանուկների և թէ հասակաւորների մէջ։ Մանուկ սերնդի մէջ կրթութիւն տարածելու համար ընկերութիւնն իր հաշուով դպրոցներ է պահում՝ Բաթումում, Վլադիկավկասում և Գօսարչինում. դրանք տարրական դպրոցներ են, որտեղ դասաւանդութիւնը վրացերէն լեզուով է կատարվում. այդտեղ սովորում են և բազմաթիւ օտարազգաւոր երեխաներ։ Ընկերութիւնն օգնում է և ուրիշ հինգ դպրոցներին՝ Թիօնէթի, Մինսքէրի, Խէրուբանի, Քութայիսի և Սենակի ազնուականների դպրոցներին։ Ցիշալուած դպրոցների վրա ընկերութիւնը տարեկան մօտ 32,600 բուբլի է ծախսում։

Հասակաւորների մէջ գրագիտութիւնը տարածվում է գրքերի և ժողովրդական գրադարանների միջոցով. նա ունի ժողովրդական հինգ գրադարան, որոնցից ամենանշանաւորն ու ամենահարուստը Թիֆլիսի վրաց ժողովրդական գրադարանն է, որ հիմնվել է 1892 թւին, ունի մօտ 3313 հատոր գիրք, թէ տպած և թէ հին ձեռագիրներ, 1200 հատոր էլ օտար լեզուով։ Այդ գրադարանը եօթ տարվայ ընթացքում ամենայն ուշադրութիւն է դարձուցել վրաց հասարակութեանը։ Այդ գրադարանում հաւաքել են զանազան գաւառներում ցրված վրաց հին ձեռագիրներ, որոնք, հակառակ դէպքում, կարող էին կորչել։ Ձեռագիրները մեծ մասամբ վերաբերում են վրաց հին պատմութեան և աշխարհագրութեան։ Բացի դրքերից, գրադարանն ունի և բաւականաչափ հին դրամներ, պատկերներ և շատ ուրիշ նշանաւոր հնութիւններ, որոնցով նա ներկայացնում է մի և նոյն ժամանակ և մի հատուստ թանգարան։ Այդ գրադարանը հարստացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ 1898 թւին հանգուցեալ լուսանկարող Բօինով իր հնութիւնների հաւաքածուն նուիրեց յիշեալ ընկերութեանը, լուսանկարչական գործարանի հետ միասին, որը բաւական նիւթական օգուտ է տալիս ընկերութեանը։ Այդ գրադարանից օգտվում են մեծ մասամբ հասարակ ծառայողներ, արհեստաւորներ և վաճառականներ. ունի մօտ 400 բաժանորդ։

Ընկերութեան երկրորդ գրադարանը, որը նոյնպէս Թիֆլիսումն է գտնվում, հիմնվել է 1894 թւին, ունի 1300 հատոր գիրք և 200 բաժանորդ, մեծ մասամբ աշակերտներից։ Քութայիսի ժողովրդական գրադարանը նոյնպէս ընկերութիւնն է պահում, հիմնվել է 1896 թւին, ունի մօտ 1300 հատոր վրացերէն և 980 հատոր ռուսերէն գիրք, 200 բաժանորդ և ամենօրեայ յաճախող ընթերցողներ։ Ախալցխայի ժողովրդական գրադարանը հիմնվել է 1895 թւին, ընդամենը ունի 1200 հատոր գիրք, 160 բաժանորդ և ամենօրեայ յաճախող ընթերցողներ։ Ուդայի (Ախալցխայի գաւառում) ժողովրդական գրադարանը հիմնվել է 1897 թւին, ունի 400 հատոր գիրք, 69 բաժանորդ և ամենօրեայ յաճախորդներ։ Ընկերութիւնը յիշեալ հինգ գրադարանի վրա տարեկան ծախսում է մօտ 2300 բուբլի։

Ընկերութեան գործունէութիւնից մէկն է և գրքերի տպագրութիւնը։ Պէտք է նկատել, որ 20 տարվայ ընթացքում ընդամենը 35 գիրք է տպել, որ շատ քիչ է, սակայն ժողովրդական շատ նպատակայարմար և օգտակար գրքեր։ Ընկերութիւնն ունի և իր գրավաճառանոցը, որ քիչ չէ նպաստում վրացերէն գրքերի տարածմանը։ Ընկերութիւնը պահվում է անդամավճարներով (տարեկան 6 բուբլի), կամաւոր նուէրներով, ներկայացումներից ստացած մուտքերով, լուսանկարչական գործարանից, գրադարաններից և գրավաճառանոցից ստացած օգուտներով։ Վարչութիւնը բաղկացած է 11 անդամից, այն է՝ նախագահից, նրա օգնականից, գանձապահից և գործավարից, որոնք ընտրվում են երեք տարին մի անգամ ընդհանուր ժողովի կողմից։ Հիմնվելու տարին անդամների թիւն էր 245 հոգի, հետզհետէ աւելանալով, այժմ հասնում է մօտ 520-ի։ Տարեկան եկամուտն ու ծախսը հասնում է մօտ 39,700 ր.։ «Գրագիտութիւն տարածող ընկերութեան» բացումը վրաց մէջ կարելի է մտաւոր կրթութեան նոր շրջան համարել, որովհետև նա շատ մանուկներին և հասակաւորներին գրել-կարդալ է սովորեցրել և առհասարակ վրաց երիտասարդութեան մէջ մտցրել է ընթերցանութեան սէրը։ Գրագիտութիւն տարածող ընկերութեան բոլորովին հակապատկեր է ներկայացնում իր գործունէութեամբ «Վրաց հրատարակչական ընկերութիւնը», որի մասին միւս անգամ։

Դ. Տէր-Դաւթեան

## ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԷՐԻՑ

Դեկտեմբերի 3-ին

Տեսնել ու ապրել մի տագին գիւղում, որը 7—8 հազարի չափ բնակիչ ունի, սակայն և ոչ մի միջոց՝ հիւանդութեան դէպքում, օգնութիւն ստանալու կամ բժշկի պակասութիւն զգալ—ցաւալի է։ Անցեալ 1890 թւին Շուլավէրը ունէր իր սեփական բժիշկը, բայց սա մի տարի ապրելով այստեղ՝ հեռացաւ, կարծես, 'կտակելով, որ իրանից յետոյ իր տեղը թափուր մնայ. և ահա հաստատ մի տարին լրանում է, ինչ մենք բժիշկ չունենք։ Դրա դերը շատ շատերի համար զանազան հէքիմներն ու պառաների «զարին ու չոփն» են կատարում, կամ թէ չէ դեղատունը, որին գիւղացին դիմում է միայն այն ժամանակ, երբ հիւանդը վերջին շնչումն է։

Այս տարվայ սկզբում, չը նայելով որ մի երկու լրագրում գիւղիս տանուտէրի կողմից յայտարարութիւններ տրվեցին գիւղը բժիշկ հրաւիրելու մասին, բայց անօգուտ։ Ոչ մի բժիշկ ցանկութիւն չը յայտնեց գալու մեր գիւղը և պատճառը շատ պարզ է. յայտարարութեան մէջ ասված էր, որ հրաւիրվող բժիշկը պէտք է հինգ տարվայ փորձառութիւն ունենայ. որ մի բժիշկը, որ հինգ տարի փորձ է ունեցել, գուցէ և իր տեղը լաւ դրստել ու մուշտարիների մի խոշոր թիւ կազմել, կը համաձայնվէր գիւղը գընալ և այն էլ ամսական մի հարիւր բուբլի ռոճկով...

Մեր հասարակութիւնը շատ անդամ է խնդրել նահանգապետին թէ թղթով և թէ անձամբ՝ նրա գաւառը շրջելու միջոցին, կամ այդ արել է գաւառապետի միջնորդութեամբ, որ մեր հարևան Սկատէրինենֆելդ կոլօնիայի հիւանդանոցը (пріемный покой) իր բժիշկով Շուլավէր

---

թէ շուրջը կառուցված են միւս շինութիւնները անային կենդանիների համար։ Ցառաքակի հրդեհները ստիպել են գիւղացուն իր ունեցածը տան մէջ չը պահել։ Նա իր տան առջև, փողոցում, փորում է ստորերկրեայ մի որջ, որի մուտքը փակված է լինում երկաթէ դռնով. այս փոսի մէջ դրված են նրա պաշարը, ուեղորդ շորերը, ամանները, անհրաժեշտութեան արդիւնքը՝ կտաւը, թաղիքը, մի խօսքով այն, ինչ որ չէ ծառայում առօրեայ պիտոյքներին։ Սրա մօտ փորված է մի ուրիշ որջ, որի մէջ ուտելեղէն են պահում՝ հաց, իւղ, կաթ. այստեղ, ձմեռը, հաւաքում են ձիւն, որը մնում է մինչև ամառվայ վերջերը։ Գիւղի բոլոր խրճիթները հատարեա միատեսակ են և շարված են զլխաւոր փողոցի երկարութեամբ երկու շարքով։ Այդ փողոցը այնքան լայն է, որ եթէ մի շարքում հրդեհ է պատահում, կրակը դժուարութեամբ է անցնում դէպի միւս կողմը։ Ամբողջ գիւղը շրջապատված է ցանկապատով, որ տաւարը գիւղից դուրս չը գայ և դնայ արտերը մտնի ու փչացնէ։ Փողոցի երկու ծայրում գտնվող դրռների մօտ միշտ պահապաններ են դրված։ Գիշերները այդ պահապանները շրջում են գիւղի մէջ, իրանց փայտեայ կոշնակները չխչխկացնում, պաշպանում գիւղացիների հարստութիւնը գողերից։ Այս կողմերում գողութիւն քիչ է պատահում։ Գիւղացիք սովորութիւն չունեն գիշերը խրճիթի դուռը կողպել, ամեն ինչ բաց է, մինչև անդամ շատ իրեր՝ կացին, թամբ, սանձ թափված են տան առջև,—գողացող չը կայ։

Մի գիշեր, խոր քնի մէջ յանկարծ լսում եմ չարագուշակ ձայն՝ «հրդեհ»։ Գիւղի պահապանն է այդ, որ քնաթաթախ շինականներին օգնութեան է կանչում։ Նա էլ միւսների հետ վազում եմ դէպի հրդեհատեղին. գեռ տեղ չը հասած, աչքիս առջև բացվում է մի ցաւալի տեսարան, մի և նոյն ժամանակ վեհ և հրաշալի։ Քանի մի խրճիթներ են այրվում։ Տարիներով չորացած գերանները, տախտակները ու տանիքի յարդը միանդամից բռնկվել են։ Բոցի կարմիր լեզուները երկինք են բարձրացել։ Ծուխը և կայծերը բռնել են ամեն կողմ։ Երկնքի մի մասը շառագունել է, կարծես արշալոյսը լինի բացվելիս։ Մօտակայ ձորակի մէջ կանգնած ջուրը արեան լճի տպաւորութիւն է թողնում։ Վիթխարի խարոյկը գնալով աւելի է բորբոքվում, ճայթում է, սպառնալով կրակ դցել և միւս խրճիթները։ Բարեբաղդաբար, գիշերը շատ խաղաղ է, քամի չը կայ. հակառակ դէպքում կրակը լափում է տների ամբողջ շարքեր։ Գիւղացիները խմբովին կանգնել են հեռու և «թամաշա» են անում. նրանք սառնասրտութեամբ դիտում են, թէ ինչպէս կրակը ագահութեամբ կուլ է տալիս իրանց հարևանների բնակարանները. ոչ ոք չէ մտնում, օգնող չը կայ. այդ մարդիկ, կարծես, կամ զուրկ են ինքնօգնութեան զգացմունքից, կամ իրանց կեանքում այնքան են ընտելացել այդ արհաւիրքին, որ սովորական երևոյթների շարքն են անցել հրդեհները։ Իրաւ է, գիւղում չը կային որ և է կազմակերպած հրշէջ խումբ և մեքենաներ, բայց մարդիկ այս դէպքում էլ, եթէ ցանկանան, կարող են կանգնել կրակի դէմ։ Ցաճախ ես ականատես եմ եղած Շվէյցարիայում, թէ ինչպէս գիւղացիները ազգութեամբ հրդեհը հանգցնում են. նրանք՝ կին, երեխայ, ծեր, բոլորը կանգնում են երկու շարքով հրդեհից սկսած մինչև ջուրը և դոյլերի միջոցով ջուրը անդադար բերում են ու կրակի վրա թափում։—Այստեղ ոչ ոք մատ չէր շարժում, չը նայած որ ջուրը շատ մօտ էր և ամեն գիւղացի տանը մի քանի դոյլ ունէր։

Այրվում էին երեք տուն, որոնցից երկուսի տէրերը, տղամարդիկ, ներկայ էին և մի կերպ աշխատում էին իրանց խրճիթները ազատել կրակի լափող բերանից։ Իսկ երրորդ տան տղամարդիկ այդ գիշեր բացակայ էին գիւղից. նրանք հարևան գիւղում աշխատում էին օրավարձով. տանը մնացել էին միայն կանայք և երեխաներ, որոնք հազիւ կարողանում են կրակի միջից անվնաս դուրս պրծնել։ Սրանք այնքան աղքատ էին, որ մինչև անդամ գետնափոր պահեստ չունէին, և իրանց ունեցած չունեցածը այրվում է խրճիթի հետ։ Մի կերպ կարողանում ենք միայն գերանները ազատել այրվելուց։ Կրակը սկսվել էր այս տան դռանից, ուր գտնվում էր խեղճերի միակ հորթը, որին գիւղական հաստանքը իր չքաւոր անդամին ընծայել էր։ Հորթի կորուստը յուսահատութեան էր հասցրել գեղջկուհուն. պէտք էր տեսնել, թէ ինչպէս նա չոքած այրվող ու սևացող կենդանու դիակի առջև, աղիողորմ լալիս էր՝ «լաւ չէր լինի, մրմնջում էր նա, որ քո փոխարէն ես այրվէի, ես խորովվէի կրակի մէջ, իմ սիրունիկ. դու էիր մեր միակ յոյսը, դու պիտի կաթ տայիր իմ երեխաներին...» և ամբողջ օրը լսելի էին նրա հեծեծանքը ու սրտաճուչ խօսքերը։

Տները այրվեցին, տէրէրը ճարահատեալ իրանց ազգականների մօտ տեղափոխվեցին. օրերանցան, բայց մէկը հարցնող, տեղեկացող չեղաւ, արդեօք անզգուշութիւնից հրդեհը առաջացաւ, թէ չար ոսոխի ձեռքը կրակ դրեց։ Միայն գիւղացիները հաւատացնում էին, իբր թէ այդ հրդեհը թշնամու գործ էր։

Գիւղացու խրճիթը իր բոլոր յարմարութիւններով մօտաւորապէս չորս հարիւր բուբլի արժէ։ Երբ հրդեհը ոչնչացնում է նրա բնակարանը և բնակարանի հետ՝ ձին ու կովը (հրդեհի ժամանակ հաստատ անկարելի է լինում կենդանիներին ազատել, որովհետև փայտը ու յարդը այնպիսի արագութեամբ են բռնկվում, որ դամ մտնելը անհնարին է լինում), այն ժամանակ գիւղացու մտահոգութիւնը սկսում է կամաց-կամաց ընկնել. նրա համար շատ դժուար է լինում նոր խրճիթ կառուցանել և կենդանիներ ձեռք բերել։ Եւ այդպիսի գիւղացին ընկնում է «բատրակների» շարքը։

Անբերրիութեան յատնից գալիս են և հիւանդութիւնները, որոնք, բժշկական կանոնաւոր օգնութեան բացակայութեան շնորհիւ, այս կողմերում մեծ վնասներ են պատճառում։ Լնդացաւը (цынга) և տիֆը սովի բարեկամներն են։ Մի վիճակագրական տեղեկութիւնից իմանում ենք, որ այս ամառ Սամարա նահանգի միմիայն Ստավրոպոլ գաւառում 10 հազար ընդացաւոր կային, որոնցից միայն հինգ հազարին կարողացել են բժշկական օգնութիւն հասցնել։ Այս ցաւից հիւանդանում էին գլխաւորապէս կանայք և երեխաները, առաւել ևս Թաթար կանայք *), որոնք իբրև մահմեդական կանայք, ինչպէս յայտնի է, կերակրվում են իրանց տղամարդկանց սեղանից մնացած փշրանքներով, և այդ անբաւական սննդառութիւնից առաջանում է և ընդացաւը։

Բացի վերոյիշեալ հիւանդութիւններից այս կողմերում խիստ տարածված են աչքի հիւանդութիւնները, գլխաւորապէս խշրուկը (трахома), այլազգիների՝ մօրդվինների, չուաշների և Թաթարների մէջ։ Մատուշկինո գիւղի բնակիչների, որոնք բացառապէս մօրդվիններ են, 72% հիւանդ են խշրուկից։ Կին, տղամարդ, ծեր, երեխայ՝ բոլորն էլ վարակված են այդ զարհուրելի հիւանդութիւնով. կարելի է ասել, որ մարդիկ այստեղ ծնվում են, որ վերջը կոյր մեռնեն։ Աղքատութիւնը ու տգիտութիւնը քիչ չեն նպաստում խշրուկի տարածմանը։—Սովածութիւնն էր պատճառը, որ գարնան սկզբին ամբողջ գիւղեր հիւանդ էին հուսկզբում։

(Կը շարունակվի)

---

*) Ազգագրական մի կուրիոզ. տեղիս Թաթար կանայք, գեղեցկանալու նպատակով, Աստրախանի վարձնի կանանց նման իրանց առամները սևացնում են սև ներկով։

փոխադրեն, կամ այստեղ մի նոր դրա նման հիւանդանոց հիմնեն իր սեփական բժշկով ու ֆելդշէրով, սակայն այդ խնդիրները մինչև օրս առանց հետևանքի են մնացած, չը նայելով որ հասարակութիւնը իր կողմից խոստանում էր տարեկան 1000—1200 բուբլի օժանդակութիւն տալ բացվող հիւանդանոցին, և միայն ամսիս 2-ին գաւառապետի հրամանով ընդհանուր ժողովի էին հրաւիրվել շուլավէրցիները վերը յիշած հարցի մասին խօսելու։ Գաւառապետը նախ բացատրելով գիւղի համար բժշկի ու հիւանդանոցի անհրաժեշտ լինելը, պահանջեց, որ հասարակութիւնը իր կողմից տարեկան 2500 բուբլի տայ և առանձին մի գումար դեղօրայքի համար։ Հասարակութիւնը այդ գումարի մեծութեան պատճառով բոլորովին մերժեց գաւառապետի առաջարկութիւնը, առարկելով, որ գիւղը առանց այդ էլ հազար մի ցաւ ու կրակ ունէ։ Այս մերժումը գաւառապետին մի փոքր զայրացրեց, որից յետոյ նա այլ ևս չը խօսեց դրա մասին ու հեռացաւ ժողովից, ժամանակ տալով ժողովրդին այդ հարցի վրա լուրջ մտածելու։

Լսում ենք, որ նահանգական վարչութիւնը վճռել է Սաղալիու փոքրիկ գիւղում, որ մեզանից 15 վերստ հեռու է, հիւանդանոց բանալ, առանց գիւղացիների կողմից օժանդակութեան։

Ա. Ի.

## ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսում և նրա շրջակայքում կատարեալ ձմեռ է։ Օդը ցրտել է, ջերմաչափը զրոյից իջել է։ Ձիները պատել է բոլոր բանջարանոցները և արօտատեղերը։ Թիֆլիսի վաճառանոցում կանաչի չը կայ։ Ճանապարհների խանգարվելու պատճառով քաղաքը չէ կարողանում սանալ ոչ փայտ, ոչ էլ ուրիշ մթերքներ։ Միսը թանդացել է մինչև 12—15 կոպէկ ֆունտը։ Փայտի պահեստները թանգացել են փայտը մէկ ու կէս և երկու անգամ։ Ըստ երևոյթին, ձմեռը խիստ է լինելու և մեծ դժբաղդութիւն է բերելու աղգաբնակութեան անապահով մասին։ Խարխուլ տներից շատերը վնասվել են ձիւնի ծանրութիւնից։ Երկաթուղու գիծը և պօստային ուղիները վնասվել են և գործում են անկանոն։ Անդրկովկասի երկաթուղին մի քանի օր ստիպված էր ընդհատել մի քանի տեղ գնացքների երթևեկութիւնը։ Կարսի երկաթուղին մի քանի օր է, որ բոլորովին չէր գործում։

—

Թիֆլիսում բղացաւը դեռ չէ վերջացել և օրէցօր տարածվում է քաղաքի զանազան թաղերում։ Թէև բղացաւով մեծերը չեն վարակվում, բայց այս օրերս Հալաբարի հիւանդանոցում բղացաւով պառկել են երկու հիւանդներ—մէկը 20 տարեկան, իսկ միւսը 39 տարեկան։ Գիմնազիայի և այլ դպրոցների աշակերտների մէջ էլ տարածված են ծաղիկ, խօրուշակ և այլ հիւանդութիւններ։ «Մասիս» հիւանդանոցում հիւանդների թիւն այնքան չատացել է, որ դադարեցրել են նոր հիւանդների ընդունելութիւնը՝ տեղ չը լինելու պատճառով։

—

Առացանք Մանուկ Աբեղեանի՝ «Der Armenische Volksglaube» անունով գերմաներէն լեզուով աշխատութիւնը, որ տպվել է Լայպցիգ քաղաքում։ Այդ աշխատութեան մէջ հեղինակը տալիս է տեղեկութիւններ հոգու, մահվան, լոյսի, խաւարի, ջրերի, բոյսերի, կրակի, օձերի, որոտման և ուրիշ բնութեան երևոյթների մասին այն հաւատալիքները և նախապաշարմունքները, որ ունի հայ ժողովուրդը։ Գիրքը բաղկացած է, միջին դիրքով, 128 երեսից։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ահա մի քանի օր է այստեղ սաստիկ ցրտեր են լինում։ Շաբունակ ձիւն է գալիս։ Կենսական պիտոյքների թանգութիւնը չափ չը կայ։ Քաղաքիս չունևորների անել դրութիւնն էլ անուշադրութեան է մատնված։ Ինչ կը լինի այս խեղճերի վերջը ձմեռվայ այս ցուրտ օրերին։ Մեր մի քանի հարուստները չեն մտածում այդ մասին»։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Ամբողջ օր ու գիշեր ձիւն է գալիս. դեռևին կէս արշինից ասել ձիւն է նստել. դա սաստ տարի լինելու լաւ նշան է։ Այս տարվայ ամբարված և մատակ անցեալ տարվանից մնացած գինիները մնում են առանց ծախվելու։ Գինու վերջին ծախվում է խանութներում լաւ տեսակը 1 ր. 50-ից—1 ր. 80 կոպէկ։ Սորտ տեսակը 1. ր. 20-ից—1 ր. 35 կոպէկ։ Գարին 65 կ.—75 կ. պուդը։ Ցորենը 1 ր.—1 ր. 10 կ., արիրը 20-ական կոպէկ ցորենի գնից թանդ»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼՈ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Լոնդոնում էլնց որ հեռագիրը ստացվեց Տուգելա գետի մոտ Բուլլերի կրած պարտութեան մասին, մարկիզ Սալսբիւրի մինիստրների խորհուրդ հրաւիրեց, որի նիստը տեղի ունէր անգլիական արտաքին գործերի մինիստրութեան մէջ և շարունակվեց մոտ մէկ ժամ։ Մինիստրների մեծ մասը բացակայ էր Լոնդոնից, այդ պատճառով խորհրդին ներկայ էին միայն պ. Բալֆուր, Դէվոնշիրեան դուքսը, զինուորական մինիստր լորդ Լանսդոուն և Գոշէն՝ ծովային վարչութեան լորդը։ Զէմբէրլէն, որի ներկայութիւնը չափազանց անհրաժեշտ էր, այդ ժամանակը Դուբլինի ճանապարհի վրա էր, ուր տեղական համալսարանը մատուցանելու էր նրան դոկտորի պատուաւոր կոչումը։ Վճռված է զէնքի կանչել կրկին երկու դիվիզիա և 8 բատարէաներ, որոնք Հարաւային Աֆրիկա կուղարկվեն որքան կարելի է շուտ։

Ներկայումս պատերազմական բեմի վրա գտնվում են 69,000 կանոնաւոր զորքեր, 13,400 տեղական զորքեր, ծովային բրիգադայի 1,000 զինուորներ, և կօլոնիաներից 1670 կամաւորներ։ Ճանապարհի վրա են գտնվում էլի 16,000 զինուորներ։ Բայց Հարաւային Աֆրիկայում գտնված զորքերի թիւից պէտք է հանել Լէդի-Սմիթի 10,000 թերղապահ զորքը և մոտ 8000 սպանվածներին, վիրաւորվածներին ու գերիներին։

Վուլվիչի զինուորական դպրոցի վերջին դասընթացի 60 աշակերտներին արդէն օֆիցէրի աստիճան են տուել։ Նրանք պէտք է անյապաղ գնան պատերազմի դաշտը։ 7-դ դիվիզիայի զէնքի կանչելը տեղի ունեցաւ ուրբաթ։ Պահեստի զինուորները պէտք է իրանց զօրաբաժինների շարքը մտնեն դեկտեմբերի 15-ին (27-ին)։ Միայն դեկտեմբերի վերջում զօրքերի զինուորութիւնը կատարելապէս կը վերջանայ և կարելի է ասել, որ յունվարի կէսին այդ դիվիզիան կը կարողանայ տեղ հասնել։

Լրագիրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում բրիտանական նոր գլխաւոր հրամանատարի մասին Հարաւային Աֆրիկայում և ընդհանուր շտաբի նոր հրամանատարի մասին։

Նոր գլխաւոր հրամանատարը, Կանդահարեան լորդ Ռոբէրտս, բրիտանական զօրքի ամենափայլուն գեներալներից մէկն է։ Զինուորական ասպարէզն ընտրելով, նա իր անձնական քաջութեամբ ստացաւ օֆիցէրի աստիճան և Վիկտորիա շքանշան Հնդկաստանի ապստամբութեան ժամանակ 1858 թիւին։ Դրանից յետոյ նա մեծ աջողութեամբ մասնակցեց լորդ Նէպիրի աբիսինիական արշաւանքին, որի ժամանակ նա շտապով գործող զօրքի հրամանատար նշանակվեց։ 1879 թիւ հոկտեմբերի 9-ին նա մուտք գործեց Կաբուլ, հետևեալ տարին էմիր հրատարակեց Աբդուրահմանին, ազատեց գեներալ Գրիմբօվին, որ փակված էր Կանդահարում, և 1880 թիւ սեպտեմբերի 9-ին վճռական ջարդ տուեց թեկնածու Էյուբին։ 1881 թիւին, անգլիական զօրքի պարտութիւնից յետոյ Տրանսվալում, Մաջուբի մոտ, գեներալ Ռոբէրտս հարաւ-աֆրիկական զօրքի գլխաւոր հրամանատար նշանակվեց։ Ինչպէս և այժմ, նրան յանձնարարված էր փրկել անգլիական զօրքի պատիւը, բայց նախ քան նրա Աֆրիկա հասնելը, Գլադստոնի կառավարութիւնը խաղաղութեան դաշն կապեց Տրանսվալի հետ։ Ապա գեներալ Ռոբէրտս գլխաւոր հրամանատար ուղարկվեց Հնդկաստան, և այդտեղ էլ նրան էր վիճակված աւարտել Բիրմանի վրա եղած արշաւանքը։ 1892 թիւին Ռոբէրտս ստացաւ Կանդահարեան լորդի տիտղոս և հետևեալ տարին Անգլիա փոխադրվեց, ուր նշանակվեց իրլանդական զօրքերի գլխաւոր հրամանատար։ Ռոբէրտս 67 տարեկան է։

Ընդհանուր շտաբի հրամանատար լորդ Կիչենէր ազգին ժողովրդականութիւն է վայելում Անգլիայում, որպէս Մահդիին յաղթող։ Նա ծնվել է 1850 թիւին. 1883 թիւին մտաւ եգիպտական զօրքը և հասաւ գլխաւոր հրամանատարի (սարդարի) աստիճանին։ Դրա հետ միասին նա ստացաւ Սուդանի ընդհանուր-նահանգապետի պաշտօնը։ Մնալով եգիպտական զօրքի մէջ, նա մասնակցեց վեց պատերազմներին։ Անցեալ տարի նա վերջնական հարուած տուեց մահդիականութեանը Սուդանում, ջարդելով Մահդիին Խարթումի մոտ եղած կռիւի մէջ։ Այդ արշաւանքը նա փառաւոր կերպով էր կազմակերպել։ Նա իր ծառայութիւնների համար ստացաւ պէրի կոչում և խոշոր դրամական պարգև։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Петерб. Вѣдомости» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է. «Թիւրքաց արտաքին գործերի մինիստրութիւնը պաշտօնական յայտագրեր ուղարկեց եւրօպական պետութիւնների ներկայացուցիչներին, որոնք իրանց սեփական պօստերն ունեն Թիւրքիայում (Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը), պահանջելով պարտաւորեցնել այստեղի արտաստահմանեան պօստային բաժանմունքներին՝ բռնել արտաստահմանից ստացվող թիւրքերէն, արաբերէն, թաթարերէն և հայերէն լրագիրները, որոնք, մինիստրութեան խօսքով, «կրօնական երկպառակութիւն և ազգային թշնամութիւն» են սերմանում Թիւրքիայում։ Արտաստահմանում հրատարակվող արաբական և թիւրքաց լրագիրները շատ անգամ պայծառ գոյներով լուսաբանում են մի քանի փաստեր և վերջերս սաստիկ սկսել են տարածվել Թիւրքիայի ընթերցող դասի մէջ։ Հետաքրքիրն այն է, որ արգելված լրագիրների թւում գտնվում է և Բախչիսարայի ռուս-թաթարական լեզուով հրատարակվող «Переводчикъ» լրագիրը։»

—«Morning Post» լրագիրը՝ խօսելով Մագերսֆոնտէնի մոտ կրած պարտութեան մասին, ասում է, որ անգլիական զօրքերի հետ պատահած դժբախտութիւնը, անկասկած, տեղիք կը տայ Եւրօպային ծիծաղել Անգլիայի վրա, բայց դա նշանակութիւն չունի, որովհետև անգլիացիները դեռ ցոյց կը տան ամբողջ աշխարհին իրանց իսկական արժանաւորութիւնը։ «Բայց մենք, աւելացնում է լրագիրը, պէտք է խուսափենք ինքնագովութիւնից, թողնենք վարչական ծրագիր կազմելը նրանց համար, որոնց դեռ մենք չենք յաղթել, մի և նոյն ժամանակ մենք չը պէտք է արհամարհանքով նայենք այն ժողովրդին, որին մենք բաւականաչափ այժ չենք ունեցել յաղթելու։»

—«Standard» լրագիրը աշխատում է որքան կարելի է հանգստացնել հասարակական կարծիքը։ «Գեներալ Բուլլերի կրած պարտութիւնների մասին լուրերը, ասում է մինիստրական լրագիրը, անտարակոյս կաւելացնեն մեր զբաղմունքները, բայց դրանց, ինչպէս և առաջվայ պարտութիւնների մասին եղած լուրերը, պէտք է ընդունենք սառնասրտութեամբ և արժանապատուութեամբ։ Մեր կորուստները այնքան էլ մեծ նշանակութիւն չունեն, որ մենք յուսահատութեան նշաններ ցոյց տանք։ Ազգաբնակութիւնը պարտաւոր է այնպիսի վճռականութիւն ցոյց տալ, որը երբէք չէ ցոյց տուել։»

—«Daily Chronicle» լրագիրը, որ սկիզբներում մի առանձին հաճակութեամբ էր վերաբերվում դէպի բօէրները և բացարձակապէս պախարակում էր պատերազմը, այժմ, գլխաւոր խմբագրի հեռանալու պատճառով, փոխել է իր ուղղութիւնը։ Գտնելով, որ վերջին շաբաթը դժբաղդութիւնների մի ամբողջ շարք էր, դիմադրական կուսակցութեան նախկին օրգանը յոյս ունի, որ գեներալները դեռ կարող են ուղղել իրանց անաջողութիւնները, միայն մինչև բարեյաջող ելքին հասնելը հարկաւոր է առանց տատանվելու շարունակել պատերազմը։»

—Լոնդոնից հեռագրում են «Новое Время» լրագրին, որ անգլիացիների կրած պարտութիւնները այն աստիճան են յուսահատեցրել Լոնդոնի ազգաբնակութիւնը, որ մի քանի շրջաններում կասկածով են վերաբերվում դէպի Անգլիայի ծովային ոյժը և երկիւղ են կրում, որ չը լինի թէ այդ զօրքն էլ այնքան անընդունակ լինի դիմադրելու, որքան և ցամաքային ոյժը։ Հասարակութեան կարծիքը Բուլլերի դէմ է, որ դեռ մոտ ժամանակներում հասարվում էր ընդհանուրի սիրելին։ Այժմ դառնութեամբ են մտաբերում, թէ ինչպէս Բուլլեր յայտնեց, որ շուտով վերջ կը դնէ պատերազմին և բոլորովին կոչնչացնէ բօէրներին, իսկ նրա մոտ գտնվող օֆիցէրները ինդրում էին, որ իրանց անունով նամակները ուղղեն Գրէտօրիա։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

13 դեկտեմբերի

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Գիշերն այրվեց Գենիչեան արքունական գինու պահեստը. վնասն է 40,000 բուբլի։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտէրի գործ.»։ Կապշտադտի զօրքերի գլխաւոր հրամանատարը հեռագրում է զինուորական մինիստրին իրերի դրութեան մասին Հարաւային Աֆրիկայում։ Այնտեղ տեղի չէ ունեցել ոչ մի փոփոխութիւն։

«Times» լրագրին հեռագրում են Մօդդէր-Բիվերից, դեկտեմբերի 6-ից, որ ոստիկանական զօրքերի մի փոքր խումբ դեռ շարունակում է դիմանալ Կուրմանում, չը նայած բօէրների շատ անգամ գործած յարձակումներին։ Մեֆկինգի մոտ պաշարողները, ըստ երևոյթին, սաստիկ վնասվել են։ Պաշարումը այլ ևս չէ շարունակվում առաջվայ ոյժով։ Լուրեր են պարտում, որ Օրանժեան հանրապետութեան կառավարութիւնը մտադրութիւն ունի մայրաքաղաքը Բլումֆոնտէնից Վէյնբուրգ տեղափոխել, որովհետև Բլումֆոնտէն ամրացրած չէ և չէ կարելի յարմարեցնել պաշտպանութեան համար։

Մի և նոյն լրագրին հաղորդում են Սանտ-Եաղոից, դեկտեմբերի 10-ից, որ յունվարից պատգամաւորների ժողովի նիստերը կը դադարեցվեն։ Բոլոր առաջարկութիւնները՝ թղթադրամներ բաց թողնելու վերաբերեալ՝ մերժված են և հաւանական է համարվում, որ նոր կառավարութիւնը եռանդուն կերպով կը դիմադրէ այդ միջոցներին։

Շանգհայից, դեկտեմբերի 12-ից, «Times» լրագրի ստացած հեռագրի մէջ հաղորդվում է, որ Պէկինի մի ընկերութիւն որոշել է անմիջապէս ձեռնարկել այն երկաթուղու գծի կառուցման, որը պէտք է միացնի Թվոյկինեան ջրանցքի մոտ գտնվող հանքերը Տունդէյլի և Վէյգուկի հետ։ Գծի երկարութիւնը մոտաւորապէս 80 մղոն է։

ԼՕՐԵՆՅՕ-ՄԱՐԿԵՋԷ։ «Բէյտէրի գործ.»։ Գրէտօրիայից ստացած պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ Տուգելա գետի մոտ տեղի ունեցած կռւի մէջ բօէրները կորցրել են 30 մարդ՝ սպանված և վիրաւորված։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ «Բէյտերի գործ.»։ «Journal» լրագրում տպված է նախագահ Կրիւգերի ամերիկան ժողովրդին գրած նամակը։ Կրիւգեր ողջունում է Միացեալ-Նահանգների նախագահին և ժողովրդին և յայտնում է, որ նա միշտ պատրաստ է խոնարհվել միջնորդ դատարանի վճռին։ «Անգլիան, շարունակում է նա,—միշտ հակառակ էր դրան, որի պատճառով մենք էլ ստիպված եղանք պատերազմ մղել։ Անգլիան հաղարաւոր զինուորներ ուղարկեց Հարաւային Աֆրիկա և հասցրեց նրանց մինչև մեր սահմանները, որով լուսաբանեց, թէ մտադրութիւն ունի ստիպել մեզ անելու այն ամենը, ինչ նա իրաւունք կը համարէ պահանջել մեզանից։ Ամերիկան մեծ ժողովուրդը, որ մոտ հարիւր տարի սրանից առաջ ստիպված եղաւ կռիւ մղել մի և նոյն Անգլիայի դէմ, կը դարձնէ, ի հարկէ, իր համակրութիւնը դէպի մի փոքր ազգակից հանրապետութիւն, որը կռւում է զօրեղագոյն կայսրութեան հետ, իր գոյքը և իր անկախութիւնը պաշտպանելու համար։

ԿԱՑԻՐԷ։ «Բէյտերի գործ.»։ Գնդապետ Մաքն գրաւեց երկէ էլ-Օբէյդը։ Այդ քաղաքը բարուքանդ է արված և աւերակների կոյտ է ներկայացնում։

14 դեկտեմբերի

ԼՕՐԵՆՅՕ-ՄԱՐԿԵՋԷ։ «Բէյտերի գործ.»։ Պաշտօնական հեռագիրը բօէրների գլխաւոր բանակից Կոլենզօի մոտ, դեկտեմբերի 4-ից, ասում է. «Մէկ լուսաբացին եկաւ թնդանօթաձիգ զօրքի երկաթ սպասող օֆիցէր Գրէտօրիուս և հաղորդեց, որ զօրասիւնը գալիս է յարձակում գործելու Տուգելայի վրա գտնված դիրքի վրա։ Կենտրոնը բաղկացած էր գլխաւորապէս հետևակ զօրքից, բանակի թևերի վրա գտնվում էին երկու-երկու բատարէաներ. հեծելազօրքը պաշտպանութեան համար էր։ Մեր թնդանօթաձիգ զօրքը լուսութիւն էր պահպանում, որպէս զի չը մատնէ իր դիրքերը։ Երբ անգլիացիների երկու բատարէաները մօտեցան հրացանի հարուածի տարածութեան վրա, մեր զինուորները կրակ բացին ոչնչացնող ոյժով. ապա մէջ մտաւ թնդանօթաձիգ զօրքը և թշնամուն, որը յոյս ունէր անցնել Տուգելան կամուրջով, շփոթեցրեց։ Այդ ժամանակ, թշնամին յարձակում գործեց մեր հարաւային դիրքի վրա, բայց Մաուզէրի հրացանների կրակը այնպէս սարսափելի էր ներգործում, որ յարձակումը ալիքի նման յետ մղվեց, կորցնելով իր ոյժը։ Պատերազմի դաշտի վրա շարքերով ընկած մնացին սպանվածները և մեռնողները։ Անգլիացիների թնդանօթաձիգ հեծելազօրքը հասաւ մինչև գետի ափը, բայց Էմէլօի զօրաբաժնի կողմից այնպիսի սպանիչ կրակին ենթարկվեց, որ ստիպված էր թողնել իր երկու բատարէաները ևս։ Անգլիացիները երկու անգամ փորձ փորձեցին՝ մօտենալ մեր թնդանօթները տանելու համար. առաջին անգամ նրանց յիրաւի աջողվեց լծել մի թնդանօթ, բայց երկրորդ անգամ թէ մարդիկ և թէ ձիաները մի ակնթարթում սպանվեցին։ Այժմ անգլիացիները յետ քաշվեցին դէպի իրանց բանակը, և ռումբեր են արձակում կամուրջի վրա, որպէս զի մեզ չը թոյլ տան յետ տանելու մեր թնդանօթները։ Մեզ, սակայն, աւելի ուշ աջողվեց մեր ձեռքը գցել ութ թնդանօթներ։ Բօռի և Տրիչարտ գեներալները բոլոր ժամանակ ամենավտանգաւոր կէտերի վրա էին գտնվում։ Դաշտային տասն և մէկ հրանոցներ տարան վիրաւորված և մեռած անգլիացիներին։ Պատերազմի դաշտը մի քանի մղոն տարածութեան վրա ծածկված է սպանվածներով և վիրաւորվածներով։ Անգլիացիների պարտութիւնը սարսափելի էր»։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ «Վոլգի գործակալութիւն»։ «Ariosto» շոգենաւը, Գալվէստոնից դէպի Համբուրգ գնալիս, ճանապարհի վրա, երէկ առաւօտեան ծանծաղուտի մէջ խրվեց Օկրակոկի մօտ հիւսիսային Կարոլինների ծովափի վրա։ Կապիտանը և ութ մարդ ազատվեցին։ Խեղդվեցին 21 մարդ։ Նաւի մէջ սկսեց ջուր մտնել։ Երբ ծովը հանդարտվեց, Նօրֆոլկից երկու շոգենաւեր գնացին նրան օգնութիւն հասցնելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Բէյտերի գործ.»։ Պաշտօնական հեռագիրը Լէդի-Սմիթից, դեկտեմբերի 11-ից, հաղորդում է, որ այնտեղ հինգ մարդիկ մեռան հիւանդութիւնից (?)։ «Բէյտերի գործ.» աւելացնում է, թէ դրանից երևում է, որ Լէդի-Սմիթը մինչև այդ ժամանակ դեռ ևս անձնատուր չէ եղած։

ՍՈՒԽՈՒՄ։ Դեկտեմբերի 6-ին «Ольга» մարդատար շոգենաւը խաղաղ եղանակում դուրս եկաւ Սուխումից։ Ճանապարհին սկսվեց սարսափելի փոթորիկ։ Մինչև Նովոռոսիյսկ չը հասած, շոգենաւը ստիպված էր ափի մօտ խարիսխ գցել, բայց երկու խարիսխներից էլ պոկվեց և ծովը տարվեց։ Այժմ միայն իմացվեց, որ շոգենաւը գտնվում է Սինոպում։ Ճանապարհորդները չեն վնասվել. դրանց թւում գտնվում է և յայտնի նկարիչ Վերեշչագին։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ։ Գիշերվայ երկու ժամին լոյս երկուշաբթի այստեղ երևում էր ամպագին, աչքերը չլացնելու չափ փայլող մէտէօր, որի տեսանելի տրամագիծը հաւասար էր արեգակի տրամագծին մայր մտնելիս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՑԻԳԱՆԵԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ**

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բկի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում։ Սօլոլակ, Սերգիեվսկի փող., տ. Ծովիանովի։ 5—10

**Թիֆլիսի Ժողովարան**

Աւագների խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. անդամների, որ կիրակի օր, դեկտեմբերի 19-ին, երեկոյեան 10 ժամին նշանակված է ընդհանուր ժողով քննելու և վճռելու՝ 70 անդամների սահմանված գրքում գրված գանգատը, առաջարկված կանոնադրների քուէարկութիւնը և ձմեռային բնակարանի վարձելու հարցը և ուրիշ հարցեր։
(15, 19) 1—2

**Երկու** թիւրքիացիներ, որոնք երկար տարիներ պարապել են պարտիզպանութեամբ և ծաղկապտուղեամբ և լաւ գիտեն իրանց արհեստը, ցանկանում են պաշտօն ստանալ։ Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը։ 1—3

ԼԷՕ

**ԳԼԱԳՈՍՏՕՆ**

ԳԻՆՆ Է 80 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. Գրասենեակում վաճառվում են ընկերութեան և այլ գրքերը։ Ցանկացողներին դրացուցակ ուղարկվում է։
6—10

Լոյս տեսաւ

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

**1900 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ**

Ցանկացողները թող չտապեն՝ որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան։ (Ե. Հ.) 15—20

ՆՈՐԱՇԵՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ եկեղեցու գանձում նշանակված է աճուրդ, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամի 11-ին, նոյն եկեղեցուն պատկանող կրպակի և կից սենեակների, որոնք գտնվում են 5-րդ քաղաքամասում, Վինոյա փողոցում։

Երէցփոխ՝ Նիկողայոս Բայսողլեանց

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Ցայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ նրա առեւանում, 1900 թւի մարտի 28-ին, տեղի կունենայ աճուրդ, բերանացի և փակ ծրարներով, ծախելու հաւատ քաղաքապատկան (նախկին Աբեսալոմովի) երկյարկանի ամառանոցը, իր տակի գետնով, որ պարունակում է իր մէջ 203 քառակուսի սաժէն և գտնվում է Բօրժոմ ամառանոցի, Վօրոնցովսկայա փողոցում, ճեմելիքի մօտ։

Ամառանոցի հետ ծախվում է նաև նրա մէջ գտնվող շարժական կայքը, այն է՝ կահ-կարասիք, սեղանատան և խոհանոցի ամանեղէններ։ Ամառանոցի հողը տրված է Բօրժոմում ամառանոցային հողերով օգտվելու կանոնադրութեան համաձայն, որը հաստատված է նախկին Կովկասի Փոխարքայի կողմից 1851 թւի դեկտեմբերի 22-ին։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են բոլոր պայմանները տեսնել վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից, առաւօտեան ժամի 10-ից մինչև 2-ի։ Փակ ծրարները կընդունվեն 1900 թւի մարտի 28-ին մինչև ցերեկվայ ժամի 12-ը և պէտք է պարունակեն իր մէջ՝ 2000 բուբլի գրաւական, անունը, հօր անունը և ազգանունը և առաջարկելի ամենաբարձր դինը։ Այն անձինքներին, որոնք բնակվում են Թիֆլիսից դուրս և ցանկանում են ծանօթանալ պայմանների հետ, կարելի է ուղարկել այդ պայմանները (ա. 15) 2—5

**Բժշկարար Կէֆիր եւ Կումիս**

**Օ. ԿՕՐՕՆԱ**

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մեդալների՝ երկու ցուցանդէններում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից։

Ուսուցիչներին, սպասաւորներին և տնտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում։ Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայանան բժշկից առանձին դեղատոմս։

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 21—50

**ՌՈՒՍԱՑ ԷԼԷԿՏՐՕ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ**

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

**„ՍԻՄԷՆՍ ԵՒ ՀԱԼՍԿԷ“**

Ակցիօներական ընկերութեան վարչութիւնը, սրանով պատիւ ունի յայտնելու, որ նա բաց է արել

**ԲԱԳՈՒԱՅ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ**

Թատրօնական հրապարակի վրա, Արափէլովի տանը, պօստատան դիմաց.

Հասցէ նամակների համար.—Акц. Общ. Русск. Электр. заводовъ „Сименсъ и Гальске“ Баку.
Հասցէ հեռագիրների համար.—Сименсъ Баку. 9—10

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ ШОКОЛАДЪ СІУ ФАБР. С. СІУ и К° МОСКВА.
37—52 М. 35,967 (ս.)

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1900 ГОДЪ НА ДВА ИЗДАНІЯ:

I.

ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА

**„НОВОСТИ ДНЯ“**

Съ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей.

ВОСЕМНАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ.

Газета отводитъ на своихъ столбцахъ мѣсто всему выдающемуся въ русской и заграничной жизни, отмѣчая событія въ возможной полнотѣ и въ яркой, живой и общедоступной формѣ.

Помимо обширной хроники, въ „Новости Дня“ помѣщаются ежедневно многочисленныя телеграфныя сообщенія и корреспонденціи отъ собственныхъ корреспондентовъ изъ Петербурга, изъ провинціи и крупнѣйшихъ за-граничныхъ центровъ—изъ Парижа, Берлина, Лондона, Нью-Іорка и друг.

**Подписная** цѣна: на годъ—8 р. На шесть мѣсяцевъ—5 р., на три мѣсяца—3 р., на одинъ мѣсяцъ—1 р

II.

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ

**„СЕМЬЯ“**

ВОСМОЙ ГОДЪ ИЗДАНІЯ

Несмотря на свою дешевизну, журналъ „Семья“ представляетъ собою вполнѣ изящное изданіе. въ которомъ помѣщается разнообразный интересный текстъ, масса портретовъ (іерарховъ Православной Церкви, государственныхъ и общественныхъ дѣятелей науки и искусствъ и т. п.) и рисунковъ, относящихся къ злобѣ дня.

„Семья“ выходитъ по слѣдующей программѣ: 1) изящная литература: романы, повѣсти, разсказы, очерки, стихотворенія, драматическія произведенія—оригинальныя и переводныя. 2) Научныя обозрѣнія и критика: литературная, театральная, художественная и музыкальная. 3) Историческіе очерки и путешествія. 4) Біографіи. 5) Спортъ всѣхъ видовъ. 6) Изобрѣтенія, хозяйственныя свѣдѣнія, моды и смѣсь. 7) Задачи, шарады, ребусы, игры, ноты. 8) Почтовый ящикъ. 9) Снимки съ картинъ современныхъ художниковъ. 10) Иллюстраціи ко всѣмъ отдѣламъ. Портреты выдающихся дѣятелей. Рисунки, объясненія къ рисункамъ. Виньетки и пр.

По размѣрамъ своимъ и богатству содержанія „Семья“ неуступаютъ ни одному изъ дорогихъ русскихъ еженедѣльныхъ иллюстрированныхъ изданій.

Въ видѣ опыта, въ 1900 г. журналъ „Семья“ будетъ пользоваться по возможности исключительно женскимъ трудомъ, какъ литературнымъ и художественнымъ, такъ и типографскимъ.

Подписная цѣна: на годъ съ доставкою 3 р. „Новости Дня“ и „Семья“ 10 р.—Адресъ: Москва, Красныя ворота, с. д. 3—3

1889. 1892. 1896. 1892.

**Ա. ՐԱԼԼԷ եւ ԸՆԿ.**

ՀԱՑԹԱՑԹՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ

ՕԾԱՆԵԼԻՔ

**ԼԷՎԿՕՅ**

Veillet blanc

ՀՈՏԱԼԷՏ ՋՈՒՐ ՍԱՊՕՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՋՈՒՐ ՊՈՒԴՐԱ.

Москва, Кузнецкій мостъ. Тверская, д. Спиридонова. С.-Петербургъ. Новскій, 18: Садовая 25.

М. 59807 (ս.)

**СЕКРЕТЪ КРАСОТЫ**

**ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ**

А. СІУ и К° МОСКВА. 20 коп. кус.

М. 109486



ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, արաժվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

**Իմժեանէր Ն. Բ. Պասսէկի**

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԷԼԷՖՕՆ № 642.





ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

երկաթէ կամուրջներ

և տանակներ։

ՑԵՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Ա. Հ. Շ.) 49—100

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Декабря 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул. № 27.